# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
# ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Վայք - 3801, Շահումյան 18
Հեռ/tel 098992894
Էլ. Փոստ vayktown@mail.ru

*17 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2023թ.*

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ N 196-Ա

## ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՎԱՅՔ ՔԱՂԱՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ 0.00572 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԸ ՈՐՊԵՍ ԱՌԱՆՁԻՆ ՄԻԱՎՈՐ ՃԱՆԱՉԵԼՈՒ, ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԳՐԱՆՑԵԼՈՒ ԵՎ ՀԱՍՑԵԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված «Անշարժ գույքի՝ ըստ դրա գտնվելու վայրի հասցեավորման, ինչպես նաև անշարժ գույքի հասցեների ռեեստրի ստեղծման և վարման կարգի» հիմքով.

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ   Ե Մ՝

1. Վայք համայնքի սեփականություն հանդիսացող Վայք քաղաքում գտնվող բնակավայրերի նպատակային նշանակության 0,00572 հա հասարակական կառուցապատման գործառնական նշանակության հողամասը ճանաչել որպես առանձին միավոր, համայնքային սեփականություն և հասցեավորել՝ Վայք համայնք, Վայք քաղաք, Ս. Շահումյան փ. 8/10 հողամաս:
2. Դիմել ՀՀ կադաստրի կոմիտե՝ սեփականության իրավունքի գրանցման վկայական ստանալու համար:
3. Ֆինանսական բաժնին՝ կատարել համապատասխան վճարումներ:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԽԻԹԱՐ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
# ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Վայք - 3801, Շահումյան 18
Հեռ/tel 098992894
Էլ. Փոստ vayktown@mail.ru

*17 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2023թ.*

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ N 197-Ա

## ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԶԱՌԻԹԱՓ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ 0.05825 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԱՐՈՏԱՎԱՅՐԸ ՈՐՊԵՍ ԱՌԱՆՁԻՆ ՄԻԱՎՈՐ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԳՐԱՆՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով՝

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ՝

1. Վայք համայնքի սեփականություն հանդիսացող Զառիթափ բնակավայրում գտնվող 0.05825 հա մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության, 10-022-0218- կադաստրային ծածկագրով հողամասը, հողատեսքը՝ արոտավայր, ճանաչել որպես առանձին միավոր, համայնքային սեփականություն և ներկայացնել իրավունքի պետական գրանցման. չափագրման տվյալների մուտքագրման ծածկագիր՝ 2023AGRKXB:
2. Սույն որոշումը ենթակա է պետական գրանցման ՀՀ կադաստրի կոմիտեի տարածքային ստորաբաժանման կողմից:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ՄԽԻԹԱՐ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
# ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Վայք - 3801, Շահումյան 18
Հեռ/tel 098992894
Էլ. Փոստ vayktown@mail.ru

*17 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2023թ.*

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ N 198-Ա

## ՔԱՂԱՔԱՑԻ ԳԱՐԵԳԻՆ ԷԴՈՒՎԱՐԴԻ ՄԱԿԱՐՅԱՆԻՆ ԸՍՏ ՕՐԵՆՔԻ ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՎԿԱՅԱԳՐՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐԻՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ 2-ՐԴ ՓՈՂՈՑ, 5 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ, ՏՆԱՄԵՐՁ ՀՈՂԱՄԱՍԻ, ՕԺԱՆԴԱԿ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ մասով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության 2008 թվականի հունիսի 10-ի թիվ ՀՕ-117-Ն օրենքի և հիմք ընդունելով ՀՀ «Վայոց ձորի մարզ» նոտարական տարածքի նոտար Լ. Սանթոյանի կողմից 26.09.2023թ. տված ըստ օրենքի ժառանգության թիվ 556 իրավունքի ուղղված վկայագրերը և Վայք համայնքի բնակիչ՝ լիազորագրով հանդես եկող Արման Սենիկի Հարությունյանի դիմումը՝

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ  Ե Մ՝

1. Ճանաչել քաղաքացի Գարեգին Էդուվարդի Մակարյանին /ծնված՝ 1965թ./ սեփականության իրավունքը՝ Վայք համայնք, Արին, 2-րդ փողոց, 5 հասցեում գտնվող բնակելի տան՝ հարակից օժանդակ շինություններով և այն սպասարկող 0.22765 հա մակերեսով հողամասի նկատմամբ:
2. Ընդունել ի գիտություն, որ սույն որոշման 1-ին կետում նշված բնակելի տունը և օժանդակ շինությունները կառուցվել են մինչև 2001թ-ը, դրանք կառուցված չեն և չեն գտնվում Հայաստանի Հանրապետության հողային օրենսրքի 60-դ հոդվածով սահմանված հողամասերի, այդ թվում՝ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտում, շինության պահպանումը չի հակասում քաղաքաշինական նորմերին, չեն առաջացնում սերվիտուտ, միաժամանակ՝ փաստացի ավել չափագրված հողամասը ընտանիքին սեփականաշնորհված ընդհանուր հողաբաժնի չափի գերազանցում չի արձանագրում:
3. Սույն որոշումը ենթակա է պետական գրանցման ՀՀ Կադաստրի կոմիտեի տարածքային ստորաբաժանման կողմից՝ հիմք ընդունելով սույն որոշման 1-ին կետում նշված անշարժ գույքի չափագրման փաստացի արդյունքներ՝ ըստ Ա/Ձ Իննա Ադամյանի կողմից տրված հողամասի, շինությունների հատակագծերի և շինությունների բնութագրի:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **ՄԽԻԹԱՐ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Վայք - 3801, Շահումյան 18
Հեռ/tel 098992894
Էլ. Փոստ vayktown@mail.ru

*19 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2023թ.*

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ N 199-Ա

## ՔԱՂԱՔԱՑԻ ԱՐՄԵՆ ՎԱՉԻԿԻ ՀԱԿՈԲՅԱՆԻ ԵՎ ՋԱՌԻԹԱՓԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ՄԻՋԵՎ 26.10.2021 ԹՎԱԿԱՆԻՆ ԿՆՔՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ 1.64884 ՀԱ ՀՈՂԱՄԱՍԻ ՄԱՍՈՎ ԼՈՒԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, Հայաստանի . Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 466-րդ հոդվածի 1-ին մասի, Ջառիթափի համայնքապետարանի և Արմեն Վաչիկի Հակոբյանի միջև 2021 թվականի հոկտեմբերի 26-ին կնքված՝ գույքի վարձակալության N 3119 պայմանագրի , հաշվի առնելով վարձակալ Ա. Հակոբյանի դիմումը (մտից N Հ-56, 29.08.2023 թ.).

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ՝

1. Սույն թվականի հոկտեմբերի 19-ից երկկողմանի համաձայնությամբ լուծել Ջառիթափի համայնքապետարանի և քաղաքացի՝ Արմեն Վաչիկի Հակոբյանի միջև 2021թ. հոկտեմբերի 26-ին կնքված հողամասի վարձակալության N3119 պայմանագիրը 1.64884 հա հողամասի մասով /վկայական՝ N 29102021-10-0016/
2. Սույն որոշումն ուժի մեջ է ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԽԻԹԱՐ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Վայք - 3801, Շահումյան 18
Հեռ/tel 098992894
Էլ. Փոստ vayktown@mail.ru

*19 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2023թ.*

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ N 200-Ա

## ՔԱՂԱՔԱՑԻ ԱՐՄԵՆ ՎԱՉԻԿԻ ՀԱԿՈԲՅԱՆԻ ԵՎ ՋԱՌԻԹԱՓԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ՄԻՋԵՎ 26.10.2021 ԹՎԱԿԱՆԻՆ ԿՆՔՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ 1.18308 ՀԱ ՀՈՂԱՄԱՍԻ ՄԱՍՈՎ ԼՈՒԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 466-րդ հոդվածի 1-ին մասի, Ջառիթափի համայնքապետարանի և Արմեն Վաչիկի Հակոբյանի միջև 2021 թվականի հոկտեմբերի 26-ին կնքված՝ գույքի վարձակալության N 3118 պայմանագրի , հաշվի առնելով վարձակալ Ա. Հակոբյանի դիմումը (մտից N Հ-56, 29.08.2023 թ.).

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ՝

1. Սույն թվականի հոկտեմբերի 19-ից երկկողմանի համաձայնությամբ լուծել Ջառիթափի համայնքապետարանի և քաղաքացի՝ Արմեն Վաչիկի Հակոբյանի միջև 2021թ. հոկտեմբերի 26-ին կնքված հողամասի վարձակալության N3118 պայմանագիրը 1.18308հա հողամասի մասով /վկայական՝ N 29102021-10-0012/
2. Սույն որոշումն ուժի մեջ է ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՄԽԻԹԱՐ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**
**ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ**
**ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Վայք - 3801, Շահումյան 18
Հեռ/tel 098992894
Էլ. Փոստ vayktown@mail.ru

*19 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2023թ.*

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 201-Ա

## ՏԱՐԱԾՔԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հանրապետության Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի դրույթներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 2002 թվականի փետրվարի 2-ի N 88 որոշմամբ հաստատված կարգի 3.2 կետի պահանջները և հաշվի առնելով սեփականատեր Ֆենյա Եսայու Ստեփանյանի 08.10.2023թ.-ի դիմումը՝

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝.

1. ՀՀ Վայոց ձորի մարզի Վայք համայնքի Վայք քաղաքի Ջերմուկի խճ.15/8 հասցեում գտնվող Ֆենյա Եսայու Ստեփանյանին սեփականության իրավունքով պատկանող, 0.00236 հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության, հասարակական կառուցապատման գործառնական նշանակության հողամասի գործառնական նշանակությունը փոխել՝ դարձնելով բնակելի կառուցապատման, որպես նկուղ՝ առանց ճարտարապետա-նախագծային առաջադրանքի ու շին. թույլտվության:

2. Դիմել ՀՀ կադաստրի կոմիտե՝ սույն որոշման 1-ին կետում նշված փոփոխությունը գրանցելու համար:

3. Որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԽԻԹԱՐ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ**

*08917547*

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
# ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Վայք - 3801, Շահումյան 18
Հեռ/tel 098992894
Էլ. Փոստ vayktown@mail.ru

*20 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2023թ.*

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ N 202-Ա

## ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՎՐԱ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԲԱԶՄԱԲՆԱԿԱՐԱՆ ՇԵՆՔԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՀՈՂԱՄԱՍԸ ՏՎՅԱԼ ՇԵՆՔԻ ԲՆԱԿԱՐԱՆՆԵՐԻ ԵՎ (ԿԱՄ) ՈՉ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՍԵՓԱԿԱՆԱՏԵՐԵՐԻՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԱԺՆԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՓՈԽԱՆՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2006 թվականի նոյեմբերի 30-ի «Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի վրա կառուցված բազմաբնակարան շենքի պահպանման և սպասարկման համար անհրաժեշտ հողամասը տվյալ շենքի բնակարանների և (կամ) ոչ բնակելի տարածքների սեփականատերերին ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով անհատույց փոխանցման կարգի մասին» N 1855-Ն որոշումը՝

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ   Ե Մ՝

1. Վայք համայնքի՝ (քաղաք Վայք) բազմաբնակարան շենքերի պահպանման և սպասարկման համար առանձնացված հողամասերը ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով անհատույց փոխանցել տվյալ շենքերի բնակարանների և (կամ) ոչ բնակելի տարածքների սեփականատերերին (այսուհետ՝ բազմաբնակարան շենքի սեփականատերեր):

2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված հողամասեր են համարվում՝
ա) կցակառույցներ չունեցող բազմաբնակարան շենքի համար՝ շենքի պարագծով ինչպես անմիջականորեն շենքի տակ գտնվող հողատարածքը, այնպես էլ սալվածքի չափով հողաշերտը, եթե այն չի հանդիսանում ճանապարհի, փողոց կամ դրանց հարող հատված

կամ այլ անձի սեփականություն հանդիսացող հողամաս.
բ) օրինական և ինքնակամ կցակառույցներ ունեցող բազմաբնակարան շենքի համար՝ ինչպես սույն որոշման 2-րդ կետի «ա» ենթակետում նշված հողատարածքը, այնպես էլ օրինական կցակառույցի պարագծով դրա տակ գտնվող հողատարածքը, եթե այն չի հանդիսանում այլ անձի սեփականություն։

3.Ընդունել ի գիտություն, որ
ա) Վայք համայնքի Վայք քաղաքի Ալավերդյան 10 շենքի պահպանման և սպասարկման համար առանձնացված հողամասը, որն ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով անհատույց փոխանցվում է շենքերի բնակարանների և (կամ) ոչ բնակելի տարածքների սեփականատերերին, կազմում է 0.0760 հա:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման օրվանից և տարածվում է 2006 թվականի նոյեմբերի 30-ից հետո ծագած հարաբերությունների վրա:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԽԻԹԱՐ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
# ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Վայք - 3801, Շահումյան 18
Հեռ/tel 098992894
Էլ. Փոստ vayktown@mail.ru

*20 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2023թ.*

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ N 203-Ա

## ՔԱՂԱՔԱՑԻ ՍԵՎԱԴԱ ԺԻՐԱՅՐԻ ՀՄԱՅԱԿՅԱՆԻ ԵՎ ԽՆԴՐՈՐՈՒՏԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ՄԻՋԵՎ 21.12.2011 ԹՎԱԿԱՆԻՆ ԿՆՔՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ 5.0 ՀԱ ՀՈՂԱՄԱՍԻ ՄԱՍՈՎ ԼՈՒԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 466-րդ հոդվածի 1-ին մասի, Խնձորուտի համայնքապետարանի և Սևադա Ժիրայրի Հմայակյանի միջև 2011 թվականի դեկտեմբերի 21-ին կնքված՝ գույքի վարձակալության N 1092 պայմանագրի , հաշվի առնելով վարձակալ Ս. Հմայակյանի դիմումը (մտից N Հ-64, 20.10.2023 թ.).

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ՝

1. Սույն թվականի հոկտեմբերի 20-ից երկկողմանի համաձայնությամբ լուծել Խնձորուտի համայնքապետարանի և քաղաքացի՝ Սևադա Ժիրայրի Հմայակյանի միջև 2011թ. դեկտեմբերի 21-ին կնքված հողամասի վարձակալության N1092 պայմանագիրը 5.0 հա հողամասի մասով /վկայական՝ N 0149922/:
2. Սույն որոշումն ուժի մեջ է ստորագրման պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԽԻԹԱՐ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ**